



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 1198-Վ/Ը

<<17>> 2018թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԹԻՎ 12
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐՈՎ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹՎԵՐՆ ԱՎԵԼԱՅՆԵԼՈՒ ԵՎ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011Թ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 617-Ա/Ք
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով,
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին
կետով, ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված
հավելված 3-ի և հավելված 5-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԹԻՎ 12
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի տարրական հանրակրթական ծրագրով համակազմի
սահմանային 150 տեղերի թիվն ավելացնել 202-ով, հիմնական հանրակրթական
ծրագրով համակազմի սահմանային 240 տեղերի թիվն ավելացնել 100-ով և
«Կրթության և գիտության նախարարի 2011թ. մայիսի 30-ի «Հայաստանի
Հանրապետության թվով 74 հանրակրթական ծրագրեր իրականացնող պետական ոչ
առևտրային կազմակերպություններին հանրակրթական ծրագրերով գործունեության
լիցենզիաներ տալու մասին» N 617-Ա/Ք հրամանում 1-ին կետի 53-րդ տողի
տարրական հանրակրթական ծրագրով տեղերի «150» թիվը փոխարինել «352»
թվով հիմնական հանրակրթական ծրագրով տեղերի «240» թիվը փոխարինել
«340» թվով:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Հ.Հովհաննիսյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.09.2018



VERIFIED OCSP 17.09.2018 10:54:29 GMT+4

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378